**Պատասխաններ**

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2024-2025 ուս. տարի

**9 – րդ դասարան**

**1.** ա-սխալ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ; ե-ճիշտ; զ- ճիշտ; է-ճիշտ; ը-սխալ (**յուր.՝ 0.25միավոր**)

**2. ա.** Համաշխարհային օվկիանոսի՝ մայրցամաքներին հարող գոտին, ուր տարածվում են մայցամաքների արմատները: Ճիշտ ընդունել նաև Համաշխարհային օվկիանոսի՝ մայրցամաքներին հարող մինչև 200մ խորության ծանծաղ տարածքները (**0.5միավոր**):

**բ.** Քարտեզում հավասար խորություն ունեցող կետերը միացնող գիծ (**0.5միավոր**): Եթե քարտեզը չի նշվում՝ **0.25միավոր**: Իմաստային սխալների դեպքում միավոր չի տրվում:

**3.** Լյուքսեմբուրգ

**4. ա.** բնության հուշարձան **բ.** դաշնային (ֆեդերատիվ)

**5. ա.** 1) 15 գ/մ$^3$ + 5 գ/մ$^3$= 20գ/մ$^3$ – հագեցման համար անհրաժեշտ խոնավությունը (**0.25միավոր**):

2) 15 գ/մ$^3$ : 20գ/մ$^3$ x 100% = 75%

Եթե վերջին գործողությունում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **տրվում է 0.75միավոր**: Եթե պատասխանը ևս ճիշտ է՝ **1միավոր**:

**բ.** 1) Բնակչության թիվը մեկ տարի անց՝ 3000000+5000+25000-15000-15000=3000000 (**0.25միավոր**)

2) Նոր ուրբանիզացման մակարդակը որոշելու համար անհրաժեշտ է որոշել քաղաքաբնակների թվի փոփոխությունը՝ 5000-15000+40000 = 30000մարդ (**0.25միավոր**)

3) 30000 *100%/3000000 = 1% (**0.25միավոր**)

4) 70+1% = 71% (**0.25միավոր**)

Եթե որևէ կերպ ցույց չի տրվում, որ երկրի բնակչության թիվը չի փոփոխվի մեկ տարվա ընթացքում, **նվազեցնել 0.25միավոր:** Եթե սխալ է որոշվել քաղաքային բնակչության թվի փոփոխությունը, առավելագույնը 0.25միավոր: Վերջին երկու գործողությունների առնչությամբ որևէ սխալի դեպքում նախատեսված 0.5միավորը չի տրվում:

**6.** Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Բովանդակային ցանկացած սխալի դեպքում գծագրի համար **միավոր չի տրվում**: Զուտ տեխնիկական թերացումների պարագայում կարող է տրվել առավելագույնը **0.5միավոր:**



**ա.** Ամենամեծ տատանման լայնույթը տեքստիլ և հագուստի արտադրանքինն է՝ 23.7% (**0.5միավոր**), իսկ ամենափոքրը՝ տրանսպորտային միջոցներինը՝ 12.1% (**0.5միավոր**): Եթե տատանման լայնույթի չափը չի նշվում կամ սխալ է՝ այդ բաղադրիչի 0.25միավորները չեն տրվում:

**բ.** 1990-1995թթ. (**0.5միավոր**), իսկ թեթև արդյունաբերությանը նվազել է 10.3% (**0.5միավոր**):

**7.** Մեծամոր, Վայք, Մարալիկ, Ստեփանավան

Իր դիրքում ճիշտ նշված յուրաքանչյուր պատասխանի համար տրվում է **0.25միավոր**

**8. ա.** Պաղակն **(0.5միավոր)**: Երկու հիմնական պատճառներն են ծովի մակարդակից ունեցած բարձրությունը և լեռներով շրջապատված լինելու արդյունքում ջերմաստիճանային շրջադասությունը **(0.5միավոր)**: Լճին մոտ լինելու հանգամանքը չի ընդունվում որպես ճիշտ պատասխան

**բ.** Տափաստանների և անտառատափաստանների բնական զոնա (**0.5միավոր**): Սևահող (**0.5միավոր**):

**9.** **ա.** 26.3սմ (**0.5միավոր**):

**բ.** 341.9մլն մ$^3$ (**0.5միավոր**):

**գ.** Արարատյան դաշտի ոռոգումը (**0.5 միավոր**): Եթե փոխարենը նշվում է ջրային էներգետիկան կամ Սևան-Հրազդան կասկադի շահագործումը՝ միավոր չի տրվում:

Ջրառը կարելի է նվազեցնել կառուցելով նոր ջրամբարներ, ինչպես նաև անցնելով կաթիլային ոռոգման (**0.5միավոր**): Ճիշտ համարել նաև որպես լուծում գյուղատնտեսության առավել արդիական ձևերի հիշատակումը կամ ոռոգման համակարգերից ջրակորուստների նվազեցմանը առնչվող տարբերակները:

**10. ա.** զարնանը (**0.5միավոր**); պատճառը, զարնան եղանակին բազմաթիվ հիդրոէլեկտրակայանների ակտիվ շահագործումն է՝ պայմանավորված գետերի լիաջուր լինելով (**0.5միավոր**):

**բ.** Կենտրոնական Ասիայում (**0.5միավոր**): Այդ տարածաշրջանի ոչ մի երկիր ելք չունի դեպի համաշխարհային օվկիանոս (**0.5միավոր**):

**11.** Ա-10; Բ-9; Գ-1; Դ-7; Ե-4; Զ-2; Է-3; Ը-5 (**յուր. 0.25միավոր**)